ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_7_" նոյեմբերի 2012թ № 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի, **որոշում եմ.**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 68-3.2-27/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Թունյան Սուրեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Պողոսյան Ղուկաս	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Սահակյան Սիլվա	մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Խաչատրյան Աշոտ	մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ
Եղիազարյան Անիկ	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի դասախոս
Սարգսյան Արթուր	<<Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ դասախոս:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Սուրեն Թունյանին, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ Սիլվա Սահակյանին:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ հանձնաժողովի նորմալ գործունեության համար:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 7
ք. Կապան